ՏԱԳՆԱՊ...

Համարի լուսանկարները՝ Յակոբի

ԱԳԻՐՆԵՐ՝

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

Ի ՊԱՏԱՍԽԱՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԱԾ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ

Սեպտեմբերի 25ի երեկոյեան ժամը 18ից 19ը ազերի ՕՄՕՆականներին պատկանող ուղղաթիռները ռմբակոծել են Ստեփանակերտ քաղաքի մի քանի թաղամասերը, ամբողջ գիշեր դիրքային կռիւներ են գնացել Կրկժանում: Այսօր առաւօտեան ադրբեջանական ուղղաթիռների կողմից ռմբակոծուել են հայերի դիրքերը, Ասկերանի շրջանի Շոշ եւ Շուշիի շրջանի Քարինտակ գիւղերը: Ծանր հետեւանքներ չկան:

Նոյն օրը երեկոյեան ժամը 23ից, Շուշի քաղաքից, հրետանիով եւ «Ալազան» հրթիռներով վերսկսուել է Շոշ գիւղի ռմբակոծումը: Կրակն այնուհետեւ տեղափոխուել է Ստեփանակերտի վրայ: Այս ամենին հայկական կողմը պատասխանել է Շուշի քաղաքի ինտենսիվ ռմբակոծութեամբ:

Ռմբակոծութեան հետեւանքով վիրաւորուել են Ստեփանակերտ քաղաքի 2 բնակիչ, մէկը՝ ոտքից, միւսը՝ թիկունքից: Հաղորդում են նաեւ, որ անհետացել է քաղաքի բնակիչ, 70-ամեայ Ծատուր Իսրայէլեանը:

Հակառակորդի կորուստների մասին առայժմ տեղեկութիւններ չկան:

Փոխադարձ ռմբակոծութիւնը տեւել է մինչեւ գիշերուայ ժամը 3ը:

Նոյն ժամերին, Խոջալուի կողմից ռմբակոծութեան են ենթարկուել Ասկերանն ու Նորագիւղը:

Շարունակում է փակ մնալ Շուշի-Աղդամ ավտոմայրուղին:

Սեպտեմբերի 25ին ընդհարում է տեղի ունեցել Հադրութի շրջանի Տող գիւղում, ձերբակալուել են 2 հայեր: Նրանց տարել են Ֆիզուլի: Կռիւներ են սկսուել Սարիշէն գիւղում:

Սեպտեմբերի 26ին վաղ առաւօտեան, ազերիները վերսկսել են Շահումեանի շրջանի Ղարաչինար եւ Մանաշէն գիւղերի ռմբակոծումը. կէսօրին ռմբակոծութեան սկսեց ենթարկուել նաեւ Էրքեջը: